

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## **WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: <a href="mailto:Prelacy@aol.com">Prelacy@aol.com</a> Website: <a href="mailto:www.westernprelacy.org">www.westernprelacy.org</a>



## ԱՈԱԶՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ Ս. ՆԱՉԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՐ ՄԿՐՏԱՐԱՆԻՆ ՕԾՈՒՄԸ

Կիրակի, 26 Ապրիլը կրկնակիօրեն յիշատակելի օր մը եղաւ Ս. Նահատակաց եկեղեցւոյ ու անոր ծխական համայնքին համար։ Արդարեւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանը հանդիսապետեց Ս. Պատարագին ու հետեւող արարողութեանց, կատարեց նորակերտ մկրտարանին օծումը եւ ներկայ հաւատացեալներուն ուղղեց իր պատգամը։ Յաւարտ Ս. Պատարագի, ինչպես մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն, նոյնպես ալ Ս. Նահատակաց եկեղեցւոյ մեջ տեղի ունեցաւ հոգեհանգիստ, ի յիշատակ դար մը առաջ տեղի ունեցած Ատանայի կոտորածի գոհերուն լիշատակին։

Առաջնորդ Սրբազանի պատգամեն առաջ, տեղի ունեցաւ նորակերտ մկրտարանին օծման, ինչպէս նաեւ խորանի նոր վարագոլրին օրհնութեան արարողութիւնը։ Առաջնորդ Սրբացանին կողքին աղօթակից էին Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապագեան եւ եկեղեցւոլ հոգեւոր հովիւ Արժ. S. Ռազմիկ Քինլ. մէջ, Խաչատուրեան։ hn պատգամին Առաջևորդ Ungwawln անդրադարձաւ այն իրողութեան, որ այս Կիրակին կր կոչուի Կանաչ Կիրակի, երրորդը՝ Ս. Յարութեան տօնէն ետք, սա լիշատակումի օրն էր Աստուածորդւոյն աշակերտներուն համախմբումին այն Վերնատան մէջ, ու տեղի ունեցած էր Վերջին Ընթրիքը։ Այս օրը կր հանդիսանալ, Յիսուսի օրինակին հետեւողութեամբ՝ հացի ու գինիի բաժնեկցութեան իետեւաբար, հաւատքի վերանորոգութեան ու տարածման լիշատակումի օր։ »Մենք այ, շարունակեց Առաջնորդ Սրբացանը, իբրեւ ժառանգորդները այդ հաւատքին, պէտք է վերահաստատենք մեր յանձնառութիւնն ու վերանորոգենք հաւատքի մեր կեանքը«:

Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ նաեւ մկրտութեան ու վերանորոգութեան խորհուրդին. ան յիշատակեց Ս. Գրային այն դրուագը, ուր Յիսուս Նիկոդեմոսի կը պատգամէր վերստին ծնիլ Ս. Յոգիով, որպէսզի արժանի ըլլայ Երկնքի Արքայութեան։ «Այս մկրտարանը թող ըլլայ մեր Տիրոջ վերածննդեան այդ պատգամին խորհրդանիշը», ընդգծեց ան, եւ օրհնութեան խօսք ուղղեց բարերարներուն՝ Տէր եւ Տիկին Արմէն Ագեանի, ինչպէս նաեւ Խոտանեան ընտանիքին, որոնք ստանձնած էին յաջորդաբար Մկրտարանին ու վարագոլրին բարերարութիւնը։

Իր պատգամին մեջ, Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ նաեւ 1909ին տեղի ունեցած Ատանայի կոտորածներուն եւ ոգեկոչեց յիշատակը 30,000 նահատակներուն, միաժամանակ վեր առնելով անհրաժեշտութիւնը մեր Դատին արդար լուծման։ Ան եզրափակեց ըսելով, որ մեր նորահաս սերունդները պետք է դաստիարակել ոչ միայն անցեալի աւանդներով ու արժեջներով, այլ նաեւ բարգաւաճ ապագայի մը տեսլականով։

## PRELATE CONSECRATES NEW BAPTISMAL FONT AT HOLY MARTYRS CHURCH

On Sunday, April 26<sup>th</sup>, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino, where he also delivered the sermon, consecrated the new baptismal font, and blessed the new altar curtain. At the conclusion of Divine Liturgy, the Prelate presided over the requiem service during which prayers were offered for the martyrs of the Adana massacres of 1909.

Prior to delivering the sermon, the Prelate, assisted by H.E. Archbishop Yeprem Tabakian and Rev. Fr. Razmig Khatchadourian, consecrated the new baptismal font blessed the new altar curtain.

The Prelate began his sermon by first and foremost thanking God for bringing the faithful together to celebrate the third Sunday of Easter, Green Sunday, and to proclaim triumphantly, "Praise be to You, O Lord, for Your Glorious Resurrection".

The Prelate noted that this Sunday has particularly special meaning since it was the day that Jesus' disciples gathered at the same upper room where the Last Supper had taken place and with the blessing of wine and bread, in the example of Jesus, conducted the first Christian church service and experienced a blossoming in their faith, likening it to the blossoming of nature designated the third Sunday of Easter Green Sunday. The disciples, reinforced in their faith, subsequently set out to spread the Light and Word of God throughout the world. "We, as the heirs of that staunch faith, must reaffirm and reassert that we too are unyielding in our faith and manifest that faith through our deeds and in the way we live our lives", continued the Prelate.

In speaking of the consecration of the baptismal font, the Prelate referred to the day's Scripture reading which records a conversation between Jesus and Nicodemus during which Jesus speaks to him about the necessity of being born again and of being born of water and the Spirit to enter the kingdom of God, praying for the new font to be a symbol of spiritual rebirth for us all. The Prelate thanked the sponsors of the baptismal font, Mr. and Mrs. Armen and Ani Akian, and the sponsors of the altar curtain, the Khodanian family, praying for the Lord to bless and reward them for their devotion and support.

The Prelate noted that this year is the 100<sup>th</sup> anniversary of the Adana massacres and invited the faithful to join in prayer for the souls of our 30,000 martyrs and for a just resolution to our cause. He concluded by stressing that we maintain our focus on the new generation and to instruct them and instill in

them the value of our centuries old religious and national heritage to ensure not just the survival but the progress of our church, our nation, and our cause.